# Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2014 թվականի սեպտեմբերին

(վերլուծություն)

2014 թվականի սեպտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 18472 գործարք, որոնց քանակը 2014 թվականի օգոստոսի համեմատ աճել է 4.9 %-ով, իսկ 2013 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 11.1 %-ով:

2014 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2014 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2014 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4293 օտարման գործարքների 73.1 %-ը կազմել է առուվաճառքը, 26.6 %-ը՝ նվիրատվությունը և 0.3 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 40.3

%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.0 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2014 թվականի սեպտեմբերին, 2014 թվականի օգոստոսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 0.3 %-ով, իսկ 2013 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 6.3 %-ով:

2014 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 61.2 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2014 թվականի սեպտեմբերին, 2014 թվականի օգոստոսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 13.5 %-ով, իսկ 2013 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 3.4 %-ով:

2014 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | սեպտեմբեր 2013 թ. | սեպտեմբեր 2014 թ. | օգոստոս 2014 թ. |
| **Կենտրոն** | 428000 | 428000 | 428000 |
| **Արաբկիր** | 356600 | 356600 | 356600 |
| **Քանաքեռ-Զեյթուն** | 282400 | 282700 | 282700 |
| **Նոր Նորք** | 251300 | 252700 | 252500 |
| **Ավան** | 259500 | 260200 | 260200 |
| **Էրեբունի** | 249000 | 250900 | 250900 |
| **Շենգավիթ** | 255100 | 256500 | 256300 |
| **Դավթաշեն** | 275000 | 275200 | 275150 |
| **Աջափնյակ** | 248100 | 249600 | 249600 |
| **Մալաթիա-Սեբաստիա** | 241300 | 242500 | 242300 |
| **Նուբարաշեն** | 152500 | 156000 | 156000 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2014 թվականի օգոստոսի համեմատ մնացել են անփոփոխ:

2014 թվականի սեպտեմբերին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 384 բնակարան, որոնց քանակը, 2014 թվականի օգոստոսի համեմատ, նվազել է 5.0 %-ով, իսկ 2013 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 7.5 %-ով:

2014 թվականի սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով,

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | սեպտեմբեր 2013 թ. | սեպտեմբեր 2014 թ. | օգոստոս 2014 թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 114900 | 116000 | 116000 |
| | Ապարան | 56700 | 57500 | 57500 |
| | Թալին | 64500 | 65850 | 65850 |
| Արարատ | Արտաշատ | 94800 | 96850 | 96750 |
| | Մասիս | 115000 | 115700 | 115700 |
| | Վեդի | 99800 | 100700 | 100700 |
| | Արարատ | 75100 | 75500 | 75400 |
| Արմավիր | Վաղարշապատ | 154150 | 154150 | 154150 |
| | Արմավիր | 121200 | 121200 | 121200 |
| | Մեծամոր | 87500 | 87500 | 87500 |
| Գեղարքունիք | Սևան | 99150 | 99200 | 99200 |
| | Գավառ | 59200 | 59800 | 59800 |
| | Մարտունի | 107600 | 107650 | 107650 |
| | Վարդենիս | 44550 | 44800 | 44800 |
| | Ճամբարակ | 28200 | 28700 | 28700 |
| Լոռի | Վանաձոր | 88400 | 88400 | 88400 |
| | Ստեփանավան | 74500 | 74500 | 74500 |
| | Սպիտակ | 99800 | 99800 | 99800 |
| | Ալավերդի | 55000 | 55000 | 55000 |
| | Տաշիր | 47150 | 47300 | 47300 |
| | Թումանյան | 11000 | 11000 | 11000 |
| | Շամլուղ | 8000 | 8000 | 8000 |
| | Ախթալա | 20200 | 20200 | 20200 |
| Կոտայք | Աբովյան | 155100 | 155100 | 155100 |
| | Նոր Հաճն | 128600 | 128600 | 128600 |
| | Բյուրեղավան | 108150 | 108150 | 108150 |
| | Եղվարդ | 109300 | 109400 | 109400 |
| | Հրազդան | 63800 | 63800 | 63800 |
| | Ծաղկաձոր | 292500 | 292500 | 292500 |
| | Չարենցավան | 85500 | 85500 | 85500 |
| Շիրակ | Գյումրի | 109300 | 109300 | 109300 |
| | Արթիկ | 66500 | 66700 | 66700 |
| | Մարալիկ | 40300 | 40700 | 40700 |
| Սյունիք | Գորիս | 121600 | 122300 | 122300 |
| | Կապան | 92100 | 93000 | 93000 |
| | Սիսիան | 91150 | 91150 | 91150 |
| | Մեղրի | 80300 | 80900 | 80900 |
| | Ագարակ | 46300 | 46900 | 46900 |
| | Քաջարան | 94650 | 94650 | 94650 |
| | Դաստակերտ | 8000 | 8000 | 8000 |
| Վայոց ձոր | Վայք | 95000 | 95000 | 95000 |
| | Եղեգնաձոր | 124400 | 125500 | 125500 |
| | Ջերմուկ | 112050 | 112900 | 112900 |
| Տավուշ | Դիլիջան | 113150 | 113300 | 113150 |
| | Իջևան | 118300 | 118300 | 118300 |
| | Բերդ | 60200 | 60250 | 60200 |
| | Նոյեմբերյան | 49500 | 49900 | 49900 |
| | Այրում | 31600 | 31850 | 31850 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2014 թվականի օգոստոսի համեմատ մնացել են անփոփոխ:

2014 թվականի սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 417 առուվաճառքի գործարք, այդ թվում` Երևան քաղաքում` 121 գործարք, մարզերում` 296 գործարք: 2014 թվականի սեպտեմբերին, 2014 թվականի օգոստոսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 3.5 %-ով, ընդ որում, Երևանում` 5.2 %-ով, իսկ մարզերում` 2.8 %-ով: 2014 թվականի սեպտեմբերին 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 7.5 %-ով, ընդ որում, Երևանում` մնացել է անփոփոխ, իսկ մարզերում` նվազել 10.3 %-ով:

2014 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ$^2$ և տնամերձի 400.0 մ$^2$ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները` հաշվարկված շինության 1 մ$^2$ մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | **սեպտեմբեր 2013 թ.** | **սեպտեմբեր 2014 թ.** | **օգոստոս 2014 թ.** |
| **Կենտրոն** | 476100 | 476100 | 476100 |
| **Արաբկիր** | 383000 | 383000 | 383000 |
| **Քանաքեռ-Զեյթուն** | 295000 | 295000 | 295000 |
| **Նորք-Մարաշ** | 319200 | 319200 | 319200 |
| **Ավան** | 270500 | 270500 | 270500 |
| **Էրեբունի** | 239500 | 239750 | 239750 |
| **Շենգավիթ** | 255000 | 255000 | 255000 |
| **Դավթաշեն** | 276000 | 276000 | 276000 |
| **Աջափնյակ** | 250050 | 250050 | 250050 |
| **Մալաթիա-Սեբաստիա** | 238000 | 238000 | 238000 |
| **Նուբարաշեն** | 150500 | 150800 | 150800 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ$^2$ մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2014 թվականի օգոստոսի համեմատ մնացել են անփոփոխ:

2014 թվականի սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ$^2$ և տնամերձի 1000.0 մ$^2$ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները` հաշվարկված շինության 1 մ$^2$ մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | **սեպտեմբեր 2013 թ.** | **սեպտեմբեր 2014 թ.** | **օգոստոս 2014 թ.** |
| Արագածոտն | Աշտարակ | 136200 | 136200 | 136200 |
| | Ապարան | 60050 | 60050 | 60050 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Թալին | 69250 | 69250 | 69250 |
| Արարատ | Արտաշատ | 100000 | 100000 | 100000 |
| | Մասիս | 115100 | 115100 | 115100 |
| | Վեդի | 102300 | 102300 | 102300 |
| | Արարատ | 88000 | 88000 | 88000 |
| Արմավիր | Վաղարշապատ | 153100 | 153100 | 153100 |
| | Արմավիր | 107000 | 107000 | 107000 |
| Գեղարքունիք | Սևան | 94800 | 94800 | 94800 |
| | Գավառ | 57100 | 57100 | 57100 |
| | Մարտունի | 96100 | 96100 | 96100 |
| | Վարդենիս | 41000 | 41000 | 41000 |
| | Ճամբարակ | 31100 | 31100 | 31100 |
| Լոռի | Վանաձոր | 100000 | 100000 | 100000 |
| | Ստեփանավան | 90000 | 90000 | 90000 |
| | Սպիտակ | 114000 | 114000 | 114000 |
| | Ալավերդի | 50200 | 50200 | 50200 |
| | Տաշիր | 51900 | 51900 | 51900 |
| | Թումանյան | 12000 | 12000 | 12000 |
| | Շամլուղ | 14000 | 14000 | 14000 |
| | Ախթալա | 30000 | 30000 | 30000 |
| Կոտայք | Աբովյան | 157000 | 157000 | 157000 |
| | Նոր Հաճն | 129800 | 129800 | 129800 |
| | Բյուրեղավան | 120500 | 120500 | 120500 |
| | Եղվարդ | 116100 | 116100 | 116100 |
| | Հրազդան | 82600 | 82600 | 82600 |
| | Ծաղկաձոր | 305000 | 305000 | 305000 |
| | Չարենցավան | 83000 | 83000 | 83000 |
| Շիրակ | Գյումրի | 118500 | 118500 | 118500 |
| | Արթիկ | 63100 | 63100 | 63100 |
| | Մարալիկ | 52000 | 52000 | 52000 |
| Սյունիք | Գորիս | 130000 | 130000 | 130000 |
| | Կապան | 100000 | 100000 | 100000 |
| | Սիսիան | 96500 | 96500 | 96500 |
| | Մեղրի | 84500 | 84500 | 84500 |
| | Ագարակ | 46900 | 46900 | 46900 |
| | Դաստակերտ | 11610 | 11610 | 11610 |
| Վայոց ձոր | Վայք | 90050 | 90050 | 90050 |
| | Եղեգնաձոր | 116600 | 116600 | 116600 |
| | Ջերմուկ | 131300 | 131300 | 131300 |
| Տավուշ | Դիլիջան | 113000 | 113000 | 113000 |
| | Իջևան | 123200 | 123200 | 123200 |
| | Բերդ | 60100 | 60100 | 60100 |
| | Նոյեմբերյան | 48300 | 48300 | 48300 |
| | Այրում | 36250 | 36250 | 36250 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ$^2$ մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2014 թվականի օգոստոսի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2014 թվականի սեպտեմբերին հանրապետությունում օտարվել է 1398 միավոր (637.80 հա) հող, որից Երևանում՝ 126 միավոր (13.65 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 710 միավոր (571.31 հա), որից Երևանում՝ 5 միավոր (0.71 հա),
- բնակելի կառուցապատման հողեր՝ 417 միավոր (39.74 հա), որից Երևանում՝ 56 միավոր (7.73 հա),
- հասարակական կառուցապատման հողեր՝ 183 միավոր (20.29 հա), որից Երևանում՝ 64 միավոր (5.13 հա),
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 9 միավոր (0.56 հա), որից Երևանում՝ 1 միավոր (0.08 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 12 միավոր (2.78 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 66 միավոր (2.11 հա) ընդհանուր մակերեսով
- անտառային հողեր՝ 1 միավոր (1.00 հա):

2014 թվականի սեպտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1149 միավորի (564.99 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 103 միավոր (5.33 հա), նվիրատվության գործարքներ՝ 242 միավորի (72.33 հա), որից Երևանում՝ 22 միավոր (8.27 հա) և փոխանակության գործարքներ՝ 7 միավորի (0.48 հա), որից Երևանում՝ 1 միավոր (0.05 հա):

Հանրապետությունում 2014 թվականի սեպտեմբերին, 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 31.3%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 34.3 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 13.6 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 28.6 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Լոռու մարզում՝ 194.22 հա, որից 192.55 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 23.1 %-ը կամ 265 միավորը (45.35 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 42 միավոր (1.60 հա), իսկ 76.5 %-ը կամ 879 միավորը (517.76 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 61 միավոր (3.73 հա): 2014 թվականի սեպտեմբերին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 5 գործարք (1.88 հա):

Ստորև ներկայացվում է 2014 թվականի սեպտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, անտառային հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

| | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող | | | | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղ. նշա-նակության հողեր | | Արդյունա-բերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Գյուղ. նշա-նակության հողեր | | Արդյունա-բերական օբյեկտնե-րի հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հո-ղեր | | հասարակական կառուցապատ. հողեր | | | | | | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապատ. հողեր | |
| | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) |
| Երևան | 0 | 0.00 | 0 | 0.00 | 18 | 0.80 | 24 | 0.81 | 5 | 0.71 | 1 | 0.08 | 26 | 1.21 | 29 | 1.73 |
| Արագածոտն | 3 | 1.90 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 4 | 0.31 | 54 | 44.25 | 0 | 0.00 | 30 | 2.86 | 2 | 0.08 |
| Արարատ | 10 | 2.58 | 0 | 0.00 | 6 | 0.07 | 7 | 0.16 | 63 | 23.36 | 1 | 0.01 | 34 | 2.54 | 2 | 0.06 |
| Արմավիր | 7 | 11.38 | 0 | 0.00 | 5 | 0.56 | 9 | 0.36 | 89 | 54.59 | 0 | 0.00 | 38 | 3.44 | 4 | 0.32 |
| Գեղարքունիք | 5 | 6.59 | 0 | 0.00 | 3 | 0.34 | 20 | 1.96 | 30 | 27.19 | 0 | 0.00 | 15 | 1.94 | 2 | 0.87 |
| Լոռի | 0 | 0.00 | 0 | 0.00 | 2 | 0.01 | 5 | 0.33 | 115 | 192.55 | 1 | 0.07 | 11 | 1.24 | 2 | 0.01 |
| Կոտայք | 12 | 11.66 | 0 | 0.00 | 14 | 0.55 | 11 | 0.45 | 101 | 79.26 | 0 | 0.00 | 98 | 9.23 | 12 | 5.95 |
| Շիրակ | 0 | 0.00 | 0 | 0.00 | 3 | 0.02 | 0 | 0.00 | 41 | 39.58 | 1 | 0.01 | 9 | 1.48 | 1 | 0.03 |
| Սյունիք | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.63 | 9 | 10.09 | 0 | 0.00 | 4 | 0.18 | 1 | 0.10 |
| Վայոց ձոր | 0 | 0.00 | 0 | 0.00 | 3 | 0.19 | 0 | 0.00 | 25 | 7.37 | 0 | 0.00 | 2 | 0.24 | 1 | 0.09 |
| Տավուշ | 1 | 0.43 | 5 | 0.39 | 6 | 0.32 | 12 | 0.35 | 9 | 2.30 | 0 | 0.00 | 6 | 0.64 | 2 | 0.95 |
| Ընդամենը | 38 | 34.54 | 5 | 0.39 | 60 | 2.86 | 93 | 5.36 | 541 | 481.25 | 4 | 0.17 | 273 | 25.00 | 58 | 10.19 |

Ստորև ներկայացված է 2014 թվականի սեպտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

| | Ուղղակի վաճառք | | | | | | | | Վաճառք աճուրդով | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | Արդյունա-բերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Ընդամենը | | Գյուղ. նշանա-կության հողեր | | Արդյունա-բերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր | | հասարակա-կան կառու-ցապ. հողեր | | | | | | | | բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր | | հասարակա-կան կառու-ցապ. հողեր | |
| | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) |
| Երևան | 21 | 0.62 | 0 | 0.00 | 9 | 0.37 | 12 | 0.25 | 21 | 0.97 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 9 | 0.42 | 12 | 0.55 |
| Արագածոտն | 2 | 0.20 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 2 | 0.20 | 3 | 1.99 | 1 | 1.88 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 2 | 0.11 |
| Արարատ | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 22 | 2.75 | 9 | 2.52 | 0 | 0.00 | 6 | 0.07 | 7 | 0.16 |
| Արմավիր | 4 | 0.12 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 4 | 0.12 | 17 | 12.17 | 7 | 11.38 | 0 | 0.00 | 5 | 0.56 | 5 | 0.23 |
| Գեղարքունիք | 6 | 0.55 | 0 | 0.00 | 3 | 0.34 | 3 | 0.21 | 19 | 4.54 | 2 | 2.79 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 17 | 1.75 |
| Լոռի | 2 | 0.01 | 0 | 0.00 | 2 | 0.01 | 0 | 0.00 | 5 | 0.33 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 5 | 0.33 |
| Կոտայք | 7 | 0.51 | 0 | 0.00 | 7 | 0.51 | 0 | 0.00 | 30 | 12.15 | 12 | 11.66 | 0 | 0.00 | 7 | 0.04 | 11 | 0.45 |
| Շիրակ | 3 | 0.02 | 0 | 0.00 | 3 | 0.02 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 |
| Սյունիք | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.63 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.63 |
| Վայոց ձոր | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 3 | 0.19 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 3 | 0.19 | 0 | 0.00 |
| Տավուշ | 6 | 0.20 | 1 | 0.04 | 2 | 0.03 | 3 | 0.13 | 18 | 1.28 | 1 | 0.43 | 4 | 0.35 | 4 | 0.28 | 9 | 0.22 |
| Ընդամենը | 51 | 2.23 | 1 | 0.04 | 26 | 1.28 | 24 | 0.91 | 139 | 37.00 | 32 | 30.66 | 4 | 0.35 | 34 | 1.56 | 69 | 4.43 |

2014 թվականի սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 6 գործարք (3.88 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2014 թվականի սեպտեմբերին, 2013 թվականի սեպտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 42.0

%-ով: Ընդ որում, Երևանում աճել է 1.8 անգամ, իսկ մարզերում՝ 37.5 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 2.0 անգամ, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 25.9 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 40.8 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ մնացել է անփոփոխ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի սեպտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակ | Մակերես (հա) | պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակ | Մակերես (հա) | շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 1 | 1.88 | 90.8 | 90.8 | 90.8 | 28 | 15.49 | 365.0 | 12000.0 | 3705.2 |
| Ապարան | | | | | | 3 | 2.95 | 86.5 | 2727.3 | 680.0 |
| Թալին | | | | | | 14 | 12.05 | 93.6 | 5494.5 | 742.0 |
| Ծաղկահովիտ | | | | | | 8 | 13.24 | 79.5 | 1000.0 | 315.5 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | | | | | | 30 | 7.90 | 335.1 | 10833.3 | 2570.5 |
| Մասիս | | | | | | 14 | 4.34 | 200.0 | 11904.8 | 2973.5 |
| Վեդի | 9 | 2.52 | 299.6 | 565.0 | 505.5 | 17 | 10.50 | 207.0 | 10795.1 | 1829.0 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | | | | | | 33 | 19.61 | 294.3 | 9090.0 | 1216.5 |
| Բաղրամյան | 7 | 11.38 | 70.8 | 71.2 | 71.0 | 11 | 11.19 | 90.6 | 2561.1 | 831.5 |
| Վաղարշապատ | | | | | | 32 | 16.74 | 444.4 | 11764.7 | 2017.8 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 4 | 2.06 | 199.8 | 1875.0 | 435.8 |
| Ճամբարակ | | | | | | | | 60.5 | 953.3 | 355.2 |
| Մարտունի | | | | | | 14 | 4.94 | 51.1 | 2850.0 | 775.0 |
| Սևան | 2 | 2.79 | 172.5 | 187.5 | 180.0 | 1 | 2.25 | 52.2 | 2134.8 | 328.5 |
| Վարդենիս | | | | | | 8 | 16.35 | 41.2 | 2575.1 | 410.3 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | | | | | | 1 | 0.42 | 170.4 | 6424.2 | 595.5 |
| Գուգարք | | | | | | 17 | 5.75 | 234.6 | 6065.9 | 823.1 |
| Սպիտակ | | | | | | | | 250.0 | 5555.5 | 705.5 |
| Ստեփանավան | | | | | | 8 | 3.56 | 90.6 | 1686.6 | 348.2 |
| Տաշիր | | | | | | 89 | 182.81 | 45.3 | 1384.4 | 180.0 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 4 | 2.07 | 71.4 | 1043.8 | 363.3 | 38 | 21.86 | 279.3 | 11942.7 | 4031.5 |
| Եղվարդ | 8 | 9.59 | 218.5 | 625.1 | 403.4 | 50 | 50.76 | 174.4 | 11971.8 | 2432.1 |
| Հրազդան | | | | | | 11 | 6.32 | 130.5 | 10256.4 | 1295.5 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | | | | | | 17 | 8.60 | 252.0 | 1693.1 | 613.5 |
| Ամասիա | | | | | | | | 40.9 | 261.0 | 130.0 |
| Անի | | | | | | 16 | 19.24 | 110.6 | 546.9 | 420.0 |
| Աշոցք | | | | | | | | 58.5 | 215.8 | 134.2 |
| Արթիկ | | | | | | 4 | 3.08 | 79.4 | 1428.6 | 467.5 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գորիս | | | | | | 6 | 5.24 | 92.6 | 1023.2 | 752.0 |
| Կապան | | | | | | | | 120.0 | 841.6 | 382.5 |
| Մեղրի | | | | | | | | 193.0 | 3000.0 | 748.3 |
| Սիսիան | | | | | | 3 | 4.85 | 46.3 | 1977.4 | 570.0 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | | | | | | 14 | 4.73 | 125.0 | 10000.0 | 1872.3 |
| Վայք | | | | | | 10 | 2.47 | 58.8 | 1430.7 | 626.4 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 3 | 0.34 | 213.3 | 3783.8 | 700.0 |
| Իջևան | 1 | 0.43 | 2400.0 | 2400.0 | 2400.0 | 6 | 1.96 | 267.5 | 9454.5 | 1310.0 |
| Նոյեմբերյան | | | | | | | | 46.7 | 7368.4 | 945.0 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի սեպտեմբերին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները` 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակ | Մակերես (մ²) | պայմանագրային գները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակ | Մակերես (մ²) | շուկայական գները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | | | | | | 23 | 21129.6 | 130.7 | 22200.0 | 2583.1 |
| Ապարան | | | | | | 3 | 3472.0 | 124.1 | 609.6 | 391.1 |
| Թալին | | | | | | 3 | 3310.0 | 63.2 | 1454.8 | 152.8 |
| Ծաղկահովիտ | | | | | | | | 60.0 | 214.3 | 93.0 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 1 | 42.0 | 3833.3 | 3833.3 | 3833.3 | 8 | 7481.0 | 173.9 | 7140.3 | 906.0 |
| Մասիս | 5 | 638.0 | 1500.3 | 3459.0 | 3011.1 | 21 | 12702.8 | 187.5 | 25000.0 | 1234.4 |
| Վեդի | | | | | | 5 | 5240.0 | 126.1 | 5000.0 | 665.5 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 1 | 3634.0 | 359.7 | 359.7 | 359.7 | 9 | 8551.4 | 131.6 | 9090.9 | 1216.5 |
| Բաղրամյան | 2 | 1770.0 | 233.1 | 233.5 | 233.3 | | | 100.0 | 833.3 | 240.0 |
| Վաղարշապատ | 2 | 236.0 | 2041.7 | 2047.5 | 2044.6 | 28 | 24730.0 | 197.4 | 26528.4 | 1534.1 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 1 | 1700.0 | 186.6 | 1084.3 | 684.3 |
| Ճամբարակ | | | | | | | | 71.3 | 2286.2 | 148.1 |
| Մարտունի | | | | | | 6 | 4342.8 | 119.3 | 5000.0 | 290.0 |
| Սևան | | | | | | 3 | 5770.0 | 240.0 | 3110.4 | 330.0 |
| Վարդենիս | | | | | | 5 | 7558.0 | 72.5 | 987.2 | 150.2 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | | | | | | 3 | 4810.0 | 114.3 | 1388.9 | 217.4 |
| Գուգարք | | | | | | 1 | 314.0 | 77.9 | 14083.3 | 1265.0 |
| Սպիտակ | | | | | | | | 104.9 | 1348.3 | 207.6 |
| Ստեփանավան | | | | | | 7 | 7264.4 | 88.2 | 1666.7 | 175.7 |
| Տաշիր | | | | | | | | 45.3 | 400.0 | 90.0 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 7 | 380.1 | 3087.0 | 5438.1 | 5031.4 | 48 | 37147.3 | 264.5 | 35353.5 | 2067.5 |
| Եղվարդ | | | | | | 43 | 46831.4 | 173.6 | 27000.0 | 2890.0 |
| Հրազդան | | | | | | 6 | 7513.0 | 117.7 | 34848.5 | 1323.3 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | | | | | | 5 | 5280.4 | 113.6 | 18750.0 | 336.3 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ամասիա | | | | | | | | 45.3 | 274.7 | 72.0 |
| Անի | | | | | | 3 | 8698.6 | 67.9 | 180.6 | 185.0 |
| Աշոցք | | | | | | | | 40.8 | 144.0 | 65.0 |
| Արթիկ | | | | | | 1 | 820.0 | 111.8 | 5000.0 | 218.5 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 1 | 716.0 | 112.2 | 1700.0 | 370.0 |
| Կապան | | | | | | 2 | 460.0 | 67.9 | 2638.9 | 327.5 |
| Մեղրի | | | | | | 1 | 600.0 | 68.5 | 632.9 | 232.5 |
| Սիսիան | | | | | | | | 123.5 | 875.0 | 225.0 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 3 | 1874.1 | 246.3 | 246.7 | 246.5 | 2 | 2390.0 | 96.7 | 7659.6 | 511.0 |
| Վայք | | | | | | | | 120.7 | 1448.3 | 240.0 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | 1 | 135.5 | 1107.0 | 1107.0 | 1107.0 | 1 | 1006.0 | 75.8 | 810.0 | 121.5 |
| Իջևան | 3 | 2694.4 | 159.0 | 3000.0 | 1246.9 | 4 | 3156.0 | 74.1 | 14423.1 | 565.0 |
| Նոյեմբերյան | | | | | | 1 | 2270.0 | 125.0 | 1948.1 | 236.0 |

2014 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 609 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.3 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 72.4 %-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2014 թվականի սեպտեմբերին, 2014 թվականի օգոստոսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 8.4 %-ով, իսկ 2013 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 6.7 %-ով:

2014 թվականի սեպտեմբերին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 36 բնակարանի, 84 անհատական բնակելի տան, 278 հասարակական, 51 արտադրական նշանակության օբյեկտի, 151 հողի, 8 ավտոտնակի և 1 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2014 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 5 վարձակալության գործարքի քանակը 2014 թվականի օգոստոսի համեմատ մնացել է անփոփոխ, իսկ 2013 թվականի սեպտեմբերի համեմատ՝ նվազել 50.0 %-ով: 2014 թվականի սեպտեմբերին հանրապետությունում վարձակալված 350.75 հա հողերից 0.49 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 350.26 հա հողերից 225.08 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 1.20 հա արդյունաբերական օբյեկտների, 121.97 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Լոռու մարզում՝ 126.69 հա, որից 13.49 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1945 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 10.5 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2014 թվականի օգոստոսի համեմատ, աճել է 1.8 %-ով, իսկ 2013 թվականի սեպտեմբերի համեմատ՝ նվազել 4.1 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (50.7 %), անհատական բնակելի տների (23.5 %), հասարակական նշանակության օբյեկտների (12.3 %) և հողերի (7.9 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1097 գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2014 թվականի

օգոստոսի համեմատ աճել է 6.5 %-ով, իսկ 2013 թվականի սեպտեմբերի համեմատ՝ նվազել 5.9 %-ով:

2014 թվականի սեպտեմբերին հանրապետությունում գրավադրվել է 286.33 հա հող, որից 6.71 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 93.8 %-ը կամ 268.65 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.17 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 69.50 հա, որից 68.98 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի սեպտեմբերին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 152 գործարք: 2014 թվականի սեպտեմբերին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2014 թվականի օգոստոսի համեմատ, աճել է 15.2 %-ով, իսկ 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել 5.6 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 98 գործարք, որը 2014 թվականի օգոստոսի համեմատ է աճել 19.5 %-ով, իսկ 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել 3.9 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2014 թվականի օգոստոսի համեմատ, աճել է 8.0 %-ով, իսկ 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել 8.5 %-ով:

2014 թվականի սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 2067 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2014 թվականի օգոստոսի համեմատ, աճել է 13.8 %-ով, իսկ 2013 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 32.8 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 11.2 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (19.1 %):

***ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե***